



ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

DIocese of the Armenian Church of America, 630 Second Avenue, New York, N.Y. 10016-4885 212 686-0710

Թի 411
Ապրիլ 4, 1991

Արժանաշնորհ
Տ. Աւետ Բհնյ. Թերզեան
Հովիւ Ս. Փրկիչ Եկեղեցւոյ
Նախագահ Ծխական Խորհուրդի
Ուստըր.

Սիրելի Տէր Աւետ,

Ստացած ենք համայնքիդ Անդամական Ժողովի տեղեկագիրները, որոնցմէ տեղեկացանք թէ համայնքիդ Տարեկան Անդամական Ժողովը գումարուած է Փետրուար 24, 1991-ին, եւ այդ առթիւ ընդհրուած են Ծխական Խորհուրդին հինգ անդամներ:

Այս գրութեամբ կը վաւերացնենք Ծխական Խորհուրդի հետեւեալ անդամներու ընտրութիւնը.

Մայքըլ Առաքելեան
Թովմաս Կարապետեան
Մերլլտ Խեպոյեան
Ժրնէս Սանտա
Էվըրըթ Թայթըս

Բարի եղէք շուտով Առաջնորդարան ղրկել Ծխական Խորհուրդի նորընտիր դիւանի անդամներուն անունները, հասցէները եւ հեռաձայնի թիւերը:

Այս առթիւ ձեր ուշադրութեան կը յանձնենք որ համայնքիդ տեղեկագիրներուն մէջէն կը պակսէին Առաջնորդին ուղղուած նամակը, ծխականներուն ղրկուած հրաւերին եւ օրակարգին օրինակները: Ընտրողական Ցանձնախումբը չէր կրցած թեկնածուներու երկպառակի ցանկ ներկայացնել բոլոր ընտրութիւններուն համար:

Կ'օրհնենք Ծխական Խորհուրդի նոր կազմը: Մեր մաղթանքն է որ Տէրը Իր հովանիին ներքեւ պահէ համայնքիդ անդամները եւ բոլորիդ եկեղեցանուէր աշխատանքներուն յաջողութիւն պարգեւէ:

Սիրոյ ողջունի

Խաժակ Եպս. Պարսամեան
Առաջնորդ